

## ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՎ ՄԻԼԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ

Բեգլար Ամիրջանյանը ծնվել է 1868 թ. հուլիսի 2-ին Թիֆլիսում: Ու թեև 4 տարեկան հասակում կորցնում է հորը, սակայն մայրը շատ հետևողական է գտնվում նրա ուսման հարցում: Վաղ են ի հայտ գալիս Բ.Ամիրջանյանի երաժշտական ընդունակությունները: Իր ինքնակենսագրության մեջ Բ.Ամիրջանյանը գրում է. «Դեռ մանուկ հասակից իմ մեջ նկատվում էր ծայն, ուստի ըստ հին սովորության, ով ուներ լավ ծայն, անպատճառ պետք է հաճախեր եկեղեցական երգչախումբ»<sup>1</sup>: Այսպիսով, ամեն տոն օրերին պատանի Ամիրջանյանը հաճախում է տեղի եկեղեցի, մասնակցում ժամերգությանը և ներսից ծանոթանում եկեղեցական երգեցողությանը և Պատարագի արարողությանը:

1876-ին Բ.Ամիրջանյանն ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Ինչպես հայտնի է, 1824-ին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ և ջանքերով հիմնադրված Կովկասում հայկական առաջին միջնակարգ դպրոցը, որը հետագայում անվանակոչվեց իր հիմնադրի անունով, անփոխարինելի դեր է կատարել հայ ժողովրդի կյանքում: Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտներն են եղել հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը, գրող Պերճ Պողոջանը, գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը, ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, գրող Դերենիկ Դեմիրճյանը, ազգագրագետ Երվանդ Լալայանը, զորավար Գայր՝ Հայկ Բժշկյանը և հայ մշակույթի շատ ու շատ այլ ականավոր գործիչներ: Իր գոյության հարյուր տարվա (1824-1924) ընթացքում Ներսիսյան դպրոցում են կրթվել հայ գրականության ու արվեստի, մանկավարժության ու գիտության, գյուղատնտեսության ու արդյունաբերության, առողջապահության ու պետական շուրջ 2000 գործիչներ:

Հենց Ներսիսյան դպրոցում էլ Բ.Ամիրջանյանն ստանում է իր կյանքում առաջին և լուրջ գիտելիքները: Ուսումնառության 10 տարիների ընթացքում նա իրեն դրսևորում է որպես ընդունակ, աշխատասեր ու համեստ աշակերտ՝ վայելելով թե՛ դասընկերների, և թե՛ ուսուցիչների ակնհայտ հարգանքն ու սերը: Դեռ դպրոցում ուսանելու տարիներին ցածր դասարանի աշակերտների հետ պարապելով՝ ապահովել է իր ծախսերի զգալի մասը, ինչով և թեթևացրել է մոր հոգսը:

Բ.Ամիրջանյանը դպրոցն ավարտում է 1886-ին՝ ստանալով առաջին աստիճանի վկայական:

Թիֆլիսից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Կոջոր գյուղ-առողջարանում կյանքն աշխուժանում էր ամռան ամիսներին. իրենց ամառանոցներն էին այցելում Թիֆլիսի բնակիչներից շատերը:

<sup>1</sup> Տե՛ս ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., իմ ինքնակենսագրությունս, N 1(ա, բ, գ):

Միշտ ակտիվ էր տեղի հայկական եկեղեցին, և դպրոցը նոր ավարտած 18-ամյա Բ.Ամիրջանյանը հրավիրվում է աշխատելու եկեղեցում՝ որպես երգչախմբի ղեկավար և մենակատար:

Պետերբուրգի հայկական եկեղեցին ձգտում էր ունենալ լավ երգչախումբ, և նոր ձայներ գտնելու և Պետերբուրգի հայ եկեղեցու երգչախմբում ընդգրկելու նպատակով եկեղեցական խորհուրդը պարբերաբար լիազորներ էր ուղարկում հայաշատ քաղաքներ: Բ.Ամիրջանյանի՝ Կոջորի եկեղեցում աշխատելու ժամանակ Թիֆլիս են ժամանում հայ կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ Մակար Եկմայանը և Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի անդամ և հասարակական գործիչ, բժիշկ Վարդան Վարդանյանը: Տեղեկանալով Ամիրջանյանի և նրա հաջողությունների մասին՝ հեռագրով Թիֆլիս են հրավում նրան և առաջարկում օգոստոսի վերջին մեկնել Պետերբուրգ, որտեղ խոստանում են նրան տրամադրել սենյակ և լավ աշխատավարձ: Չգալով, որ հնարավոր է իրականացնել իր վաղեմի երազանքը, այն է՝ սովորել և իր երաժշտական ընդունակությունները կատարելագործել Պետերբուրգի կոնսերվատորիայում, Ամիրջանն անմիջապես ընդունում է գայթակղիչ առաջարկը և պայմանավորված օրը ժամանում է Պետերբուրգ:

Հենց առաջին Պատարագն անցնում է լեփ-լեցուն եկեղեցում, քանի որ եկեղեցի հաճախող հասարակությունը տեղյակ էր, որ ձևավորվել է նոր երգչախումբ՝ լավագույն հայ երիտասարդ ձայներից: Ամիրջանյանի ձայնը մեծ տպավորություն է թողնում ոչ միայն հայ գաղութի վրա, այլև հիացնում է նշանավոր հայազգի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն: Այվազովսկին, լսելով երիտասարդի ձայնը, հաջորդ Պատարագին ներկայանում է ընկերոջ՝ դաշնակահար, կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, երաժշտական հասարակական գործիչ, ռուսական առաջին կոնսերվատորիայի հիմնադիր և առաջին տնօրեն Անտոն Ռուբինշտեյնի հետ: Պատարագից հետո Ռուբինշտեյնը Բեգլարին խորհուրդ է տալիս հաջորդ օրը ևեթ գալ կոնսերվատորիա և մասնակցել ընդունելության քննություններին:

Ինչպես հետագայում կհիշի Բ.Ամիրջանյանը, այդ գիշեր նա ուրախությունից չի քնում. Առավոտ կանուխ գնում է Կոնսերվատորիա և մասնակցում ընդունելության քննությանը: Քննությունը բարեհաջող հանձնելուց հետո նա ոչ միայն ընդունվում է կոնսերվատորիա, այլև ստանում է կրթաթոշակ:

1886-ի սեպտեմբերի 12-ին Բ.Ամիրջանյանն ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիա ծագումով բելգիացի օպերային երգիչ (բարիտոն) և մանկավարժ Կամիլիո Էվերարդիի<sup>2</sup> (1825-1899) դասարան: Կրթված լինելով իտալական օպերային երգեցողության ավանդույթներով, Էվերարդին անգնահատելի դեր է

---

<sup>2</sup> Ջ.Ռոսինիի «Ամիլյան սափրիչ» օպերայից Ֆիգարոյի դերերգը Էվերարդին պատրաստել է անձամբ կոմպոզիտորի ղեկավարությամբ, իսկ Շ.Գունոն իր «Ֆաուստ» օպերայի Մեֆիստոֆելի դերերգը գրելիս հաշվի է առել հենց Էվերարդիի ձայնային տվյալները:

ունեցել ռուսական օպերային երգեցողության բնագավառում՝ դասավանդելով Ս.Պետերբուրգում (1870-1888), Կիևում (1890-1897) և Մոսկվայում (1897-1899):

Ուսման առաջին տարին հեշտ չի տրվում ապագա օպերային երգչին: Ներսիսյան դպրոցում սովորած հայկական նոտագրությունը բավականին տարբերվում էր եվրոպականից, սակայն լինելով ջանասեր ու նպատակասլաց, ունենալով երաժշտական մեծ ընդունակություններ, Ամիրջանյանը մեկ տարում հաղթահարում է ռուսամական բոլոր դժվարությունները: Էվերարդին բարձր էր գնահատում Բեգլարի ջանասիրությունն ու երաժշտության հանդեպ սերը. ռուսամասողության երկրորդ տարում վերջինս արդեն հանդես էր գալիս աշակերտական երեկոներին և մասնավոր համերգներին:

1888-ին, երբ Բ.Ամիրջանը սովորում էր 3-րդ կուրսում, Էվերարդիի և Ռուբինշտեյնի միջև ստեղծագործական անհամաձայնություն է ծագում: Կոնսերվատորիայի գեղարվեստական խորհրդի նիստերից մեկի ժամանակ Ռուբինշտեյնը չի համաձայնվում Էվերարդիի կարծիքի հետ, որն իր ուսանողուհիներից մեկին մեղալ էր շնորհել: Էվերարդին, լինելով բնավորությամբ շատ անկախ, բորբոքվել էր և ասել. «Դու, Անտոն, մեծագույն դաշնակահար և երաժիշտ ես, բայց երգեցողության մեջ ավելի քիչ ես հասկանում, քան ես»: Թեև ուսանողուհին ստանում է մեղալը, սակայն Ռուբինշտեյնն ինքնասիրությունից դրդված, հարցն այնպես է դնում, որ Էվերարդիին այլևս հարմար չէր մնալ կոնսերվատորիայում. Էվերարդին թողնում է Պետերբուրգի կոնսերվատորիան և տեղափոխվում Կիև<sup>3</sup>:

Ստեղծված իրավիճակում Բ.Ամիրջանյանն իր ուսումը շարունակում է Էվերարդիի աշակերտ և օգնական, պրոֆեսոր Ստանիսլավ Գաբելի մոտ: Թեև Գաբելն Էվերարդիի աշակերտն էր, սակայն նրա դասավանդման մեթոդիկան հավանաբար տարբերվել է, որովհետև հայ երիտասարդ երգչի մոտ շուտով ի հայտ են գալիս կոկորդի հետ կապված որոշակի բարդություններ: Այս մասին վկայում է հենց Ամիրջանյանը. «Գաբելի մեթոդիկան ինձ վրա վատ ազդեցություն գործեց և ես շուտով հիվանդացա կոկորդի հիվանդությամբ, սկսեցի բուժվել, բայց հենց սկսում էի երգել, դարձյալ կրկնվում էր ցավը»<sup>4</sup>:

Բ.Ամիրջանյանի կյանքում շրջադարձային նշանակություն է ունենում հանդիպումն իտալացի երգիչ, բարիտոն Անտոնիո Կոտոնիի հետ: Այդ ծմռանը նա հյուրախաղերով այցելում է Պետերբուրգում: Ամիրջանյանը շատ էր հավանում նրան և վճռում է իր վիճակի հետ կապված խորհուրդ հարցնել: Կոտոնիի վրա բավականին մեծ տպավորություն է թողնում Բեգլարի ծայնը, և նա խորհուրդ է տալիս

---

<sup>3</sup> Տե՛ս Էվերարդիի աշակերտ Լ.Ի.Վայնշտեյնի Из воспоминаний об Эверарди

//Камилло Эверарди и его взгляды на вокальное искусство: Воспоминания ученика. — Киев, 1924, глава ХІІ.

<sup>4</sup> Տե՛ս ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., Իմ ինքնակենսագրությունս, N 1(ա, բ, գ):

անմիջապես թողնել Պետերբուրգը և մեկնել Միլանի կոնսերվատորիա՝ հետագա ուսումն այնտեղ շարունակել նպատակով:

Բ.Ամիրջանյանը ծեռնամուխ է լինում այդ ցանկության իրականացմանը: Չունենալով ֆինանսական միջոցներ՝ նա դիմում է տեղի մի շարք հարուստների, ուսանողների և կազմակերպությունների, որպեսզի իրեն արտասահմանում սովորելու համար օժանդակեն: Բայց՝ ապարդյուն: Պետերբուրգում օժանդակության ոչ մի հույս չունենալով՝ Ամիրջանյանը գալիս է իր ծննդավայր Թիֆլիս: Այստեղ նա կրթաթոշակ ստանալու ակնկալիքով դիմում է հայ մեծահարուստ - բարերար Ալեքսանդր Մանթաշյանին, որը ֆինանսապես օգնում էր հայազգի շատ ուսանողների: Բայց տաղանդավոր հայ երիտասարդը մերժում է ստանում հետևյալ մեկնաբանությամբ. «Ես երգեցողության արտիստը չեմ գտնում արժան օգնելու և այլն...»<sup>5</sup>:

Բ.Ամիրջանյանին օգնության են հասնում ընկերները: Տեսնելով հուսահատ երգչի անելանելի դրությունն ու վիշտը, նրանք որոշում են օգնել նրան. գտնում են 20 հոգու, ովքեր համաձայնվում են ամսական 5 ռուբլի տրամադրել Ամիրջանյանին: Այսպիսով, ամսական կհավաքվեր 100 ռուբլի, որը պետք է ապահովեր Միլանում գոնե նրա կեցության հարցը:

Մարիամ Թումանյանը այդ մասին գրում է հետևյալը՝ «Ընկերներն իրանց մտադրությունը կատարեցին, ինչպես երևում է հետևյալ հայտարարությունից, որ լույս տեսավ 1891 թվի հայկական լրագրներից մեկում, կարծեմ «Մշակում», նամակ խմբագրության բաժնում.

Պ. Խմբագիր

Այն Պարոններին, որոնք ազնվաբար հանձն են առել օգնել երգիչ Բեգլար Ամիրջանյանցին Իտալիայում երգեցողության արվեստը կատարելագործելու, ուրախությամբ պիտի հայտնենք, որ պարոնը, ինչպես երևում է յուր մասնավոր նամակից. արդեն Իտալիայի Մելան քաղաքումն է, ուր նա սեպտեմբեր ամսից սկսած արդեն նախապատրաստվում է մանավանդ իտալերեն լեզվի և բեմական արվեստի մեջ, որպեսզի կարողանա առաջիկա փետրվար ամսին Միլանի կոնսերվատորիան մտնել: Թող ուրեմն նորա հարգելի բարեկամները բարեհաճեն ուղարկել պարբերաբար իրանց խոստացած ամսական 5-ական ռուբլին ներքո ստորագրյալիս, որ հանձն է առել ուղարկել այդ գումարներն ըստ պատկանելույն, հետևյալ հասցեով՝ Թիֆլիս, առևտրային բանկ, Լալայանց Հովհաննես Քրիստափորին: Ուղարկողները կրստանան ընկելագիր: Ընդունեցի և այլն:

Կ. ԼԱԼԱՅԱՆՑ

Նույն տարվա հոկտեմբերի վերջերին ռուսական «Նովոստի» լրագրի մեջ կարդում ենք.

«Պետերբուրգի Կոնսերվատորիայի նախկին աշակերտ Բեգլար Ամիրջանյանցը, որն ունի աչքի ընկնող ուժ և տեմբրի գեղեցկության տեսակետից

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

բարիտոնի ծայն, այս օրերին ընդունված է Միլանի կոնսերվատորիան իբրև կոնկուրսի քննություններին առաջին թեկնածուն: Իտալիայում հայտնի երգեցողության պրոֆեսոր Ռոնկոնին<sup>6</sup> նախագուշակում է փայլուն ապագա երիտասարդ երգչին»<sup>7</sup>:

Բ.Ամիրջանյանը կատարելագործել է իտալերենի իր իմացությունը և հեշտությամբ հաղթահարել Միլանի կոնսերվատորիայի ընդունելության քննությունները:

Ընկերների կողմից խոստացված 100 ռուբլին շատ շուտով սկսում է անկանոն և ուշացումով հասնել Ամիրջանին: Մի անգամ նա ստացել է 36 ռուբլի 100-ի փոխարեն, մյուս անգամ՝ 54 ռուբլի, և վերջապես մի նամակ է ստանում Լալայանցից, որում ասվում էր, թե նրա ընկերներից շատերը հրաժարվում են վճարել, իսկ իրենից խնդրում է մի շնորհակալական նամակ գրել մի նոր անդամի համար, որը վճարել է 1 ռուբլի ամսեվճար: Այս ամենը շատ է բարկացնում պատվասեր Բեգլարին և նա անմիջապես պատասխան նամակում պահանջում է, որ Լալայանցն իսկույն դադարեցնի ժողովարարությունը, իսկ ինքը պարտավորվում է վերադարձնել ստացած բոլոր գումարների կրկնապատիկը:

Այս անելանելի վիճակից Բ.Ամիրջանյանը դուրս է գալիս իր հնարամտությամբ: 1890-ականներին Միլանում բավական մեծ թիվ էին կազմում ազգությամբ ռուսները, ովքեր իրենց ժամանցը հիմնականում անց էին կացնում Միլանի կենտրոնում գտնվող Վիկտոր Էմանուիլ<sup>8</sup> պատկերասրահի «Բիֆֆի»<sup>9</sup> կոչվող սրճարանում: Այս սրճարանը ռուսներին գրավում էր նրանով, որ ստանում էր Պետերբուրգում հրատարակվող «Նովոյե վրեմյա» թերթը: Օտար երկրում հայրենիքում կատարվող անցուդարձին ծանոթանալու այս ձևը բավականին թանկ հաճույք էր, քանի որ սեղան զբաղեցնելու համար պարտադիր էր ինչ-որ բան պատվիրելը, իսկ թերթը կարդացողների թիվն այնքան մեծ էր, որ երբեմն անհրաժեշտ էր լինում ժամերով սպասել, հետևաբար նաև պետք էր լրացուցիչ ուտելու կամ խմելու բան պատվիրել, այլապես չէր թույլատրվում մնալ սրճարանում:

Բ.Ամիրջանյանն ու իր ընկերները նույնպես հաճախում էին «Բիֆֆի» սրճարան, և հենց այս սրճարանում էլ Ամիրջանյանի մոտ ծագում է Միլանում ռուսական գրադարան բացելու միտքը: Նա անմիջապես նամակներ է գրում ռուսական մի շարք խմբագրություններին՝ խնդրելով իրեն ուղարկել թերթեր,

<sup>6</sup> Իսուքը հավանաբար իտալացի օպերային երգիչ, բաս-բարիտոն, մանկավարժ Սեբաստիանո Ռոնկոնիի (1814-1900) մասին է:

<sup>7</sup> Տե՛ս ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., Մ. Թումանյանի հուշերը Ամիրջանի մասին, N 27:

<sup>8</sup> Վիկտոր Էմանուիլ II-ի պատկերասրահը (իտալ.՝ Galleria Vittorio Emanuele II) աշխարհի ամենահին առևտրի կենտրոններից է: «Պատկերասրահն» անվանվել է ի պատիվ իտալիայի թագավորության առաջին թագավոր Վիկտոր Էմանուիլ II-ի: Շենքը 1861-ին նախագծել և 1865-1877 թթ. կառուցել է ճարտարապետ Ջուզեպպե Մենգոնին:

<sup>9</sup> Biffi Caffè-ն 1867-ին հիմնադրել է Պաոլո Բիֆին՝ միապետի խմորեղենի ավագ խոհարարը:

ամսագրեր և գրքեր: Իսկ ինքն իր ընկերների հետ խմբագրություններին կողարկի Միլանում և, առհասարակ, Իտալիայում կատարվող երաժշտական և ոչ միայն երաժշտական իրադարձությունները, տեղեկություն կտա Իտալիայում ապրող արվեստագետների կյանքի և գործունեության մասին: Ամիրջանյանի այս մտահղացումը պսակվում է հաջողությամբ: Ոգևորված այն մտքից, որ իրենք Իտալիայում կունենան սեփական անվճար թղթակիցներ, ռուսական 16 խմբագրություններ Ամիրջանյանին կանոնավոր կերպով ուղարկում են իրենց հրատարակությունները:

Այս քայլից հետո Բ.Ամիրջանյանը դիմում է ռուսական հյուպատոսություն և Միլանի քաղաքային վարչություն՝ Միլանում ռուսական գրադարան բացելու թույլատվություն ստանալու համար: Ստանալով համապատասխան թույլատվությունը, Բ.Ամիրջանյանն իր համար գրադարանի կնիք է պատվիրում, բացում է ռուսական գրադարան-ընթերցարան ամսական ընդամենը 2.5 լիրա վճարով հետևյալ հասցեով՝ Միլանի Պեշի փողոց, համար 6 տուն, Բեգլար Ամիրջանյանի բնակարան:

Նորաբաց գրադարանի լուրը շատ մեծ արագությամբ տարածվում է քաղաքի արտիստների, աշակերտների և բնակիչների մեջ, և բոլորն էլ ցանկանում են օգտվել այդքան մատչելի պայմաններով հայրենիքից նորություն ստանալու այս նոր ընձեռված հնարավորությունից:

Հենց առաջին ամսում գրադարանից ստացված շահույթը կազմում է մոտ 300 լիրա, որն Ամիրջանյանն իսկույն ուղարկում է Պետերբուրգ Լալայանցին՝ խնդրելով նրան վերադարձնել պարտքը բոլոր նրանց, ովքեր օժանդակել էին իրեն Միլանում ուսումը շարունակելու համար:

Անկախ իր կյանքում ունեցած հաջողություններից՝ Ամիրջանյանը միշտ մնացել է բարի և ազնիվ: Այս մասին է փաստում այն, որ իր գրադարանից ստացվող գումարից նա օգնություն էր հատկացնում իր պես ծանր դրության մեջ հայտնված ուրիշ ուսանողներին:

Լուծելով ֆինանսական բոլոր խնդիրները, Բ.Ամիրջանյանը լիովին նվիրվում է իր երաժշտական ընդունակությունների զարգացմանն ու վրկալ արվեստում կատարելագործմանը:

1894թ. հունիսի 21-ին Միլանի կոնսերվատորիան առաջին աստիճանի մեդալով և 600 լիրա պարգևով ավարտելուց անմիջապես հետո Բ.Ամիրջանյանը պայմանագիր է կնքում և հյուրախաղերով հանդես գալիս Միլանում, Վենետիկում, Ջենովա, Թուրինում և Իտալիայի այլ քաղաքներում:

Միլանն ընդմիշտ թողնելուց առաջ, Իտալիայում արդեն բավական հայտնի օպերային երգիչ Բեգլար Ամիրջանը<sup>10</sup> հրավիրում է իր գրադարան-ընթերցարանի համարյա բոլոր բաժանորդներին և մեծ հյուրասիրություն կազմակերպում: Ներկաներն իրենց միջից ընտրում են նոր գրադարանապետ, և Ամիրջանը հանձնում

<sup>10</sup> Ամիրջան ազգանունը հենց ինքն էր իր համար ընտրել, որպես բեմական անուն:

է մի քանի տարվա ընթացքում հավաքված գրեթե 3000 գրքերն ու կահույքը: Գրադարանի հավատարիմ բաժանորդներն էլ, ի նշան երախտիքի, Ամիրջանի մի մեծադիր նկար են կախում գրադարանի պատից, նշելով նրա անուն ազգանունը՝ իբրև Միլանում ռուսական գրադարան-ընթերցարանի հիմնադրի: «Այսպես եղավ իմ Միլանի կոնսերվատորիա ավարտումը, ապահով ու հանգիստ, առանց նեղություն ու կարիք զգալու: 1897 թվի Սեպտեմբերի մեկից սկսեցի արտիստական ասպարեզը»<sup>11</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով Բ.Ամիրջանյանի ուսումնառության (1876-1894) ժամանակաշրջանը, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները:

1. 19-րդ դարի վերջն ընդհանուր առմամբ բավական բեղմնավոր ժամանակաշրջան էր հայ երաժշտության զարգացման համար և հենց այս շրջանում, Կովկասի առաջին հայկական միջնակարգ Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին Բ.Ամիրջանյանի ստացած գիտելիքներն անփոխարինելի դեր են կատարել նրա հետագա կյանքում:
2. Բ.Ամիրջանյանի երաժշտական ընդունակությունները և, որ ամենակարևորն է, աստվածաշնորհ ծայնը, օգնում են ընդունվել Պետերբուրգի կոնսերվատորիա, պրոֆեսոր Էվերարդիի դասարան, ով լինելով իր ժամանակի լավագույն մասնագետներից մեկը, իտալական երգեցողության հիմունքներն է սերմանում տաղանդաշատ հայ պատանու մոտ:
3. Էվերարդիի վոկալ դպրոցի ու Բ.Ամիրջանյանի ընդունակությունների շնորհիվ նա ընդունվում է Միլանի կոնսերվատորիա, որն ավարտում է գերազանցության մեդալով:
4. Իր ուսումնառությանն ու համերգային գործունեությանը զուգընթաց՝ Բ.Ամիրջանյանը դարձել է Միլանում ռուսական առաջին գրադարան-ընթերցարանի հիմնադիրը:

## **ԲԵԳԼԱՐ ԱՄԻՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՎ ՄԻԼԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ**

<sup>11</sup> Տե՛ս ԳԱԹ, երաժշտական բաժին, Բ.Ամիրջանի ֆ., իմ ինքնակենսագրությունս, N 1(ա, բ, գ):

## ԳՈՌ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

Հոդվածի նպատակն է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող՝ հայ երգիչ (բարիտոն) Բեգլար Ամիրջանյանի (Ամիրջան, 1868-1935) արխիվում պահվող վավերագրերի և, մասնավորապես, «Իմ ինքնակենսագրությունս»-ի հիման վրա ներկայացնել նրա ուսումնառության տարիները Պետերբուրգի կոնսերվատորիայում (1886-1888), ապա՝ Միլանի կոնսերվատորիայում (1891-1894):

Առաջին անգամ հատուկ անդրադարձ է արվել Միլանում ռուսական առաջին գրադարան-ընթերցարանի ստեղծման գործում Բ.Ամիրջանյանի կարևոր դերին:

**Քանալի քառեր** – Բեգլար Ամիրջանյան, Պետերբուրգի կոնսերվատորիա, Կամիլիո Էվերարդի, Միլանի կոնսերվատորիա, Միլանում առաջին ռուսական գրադարան-ընթերցարան:

## ОБУЧЕНИЕ БЕГЛАРА АМИРДЖАНА В КОНСЕРВАТОРИХ ПЕТЕРБУРГА И МИЛАНА

Гор Салназарян

Цель статьи в том, чтобы осветить читателей об обучении армянского певца баритона Беглара Амирджана (1868-1935) в Петербургской (1886-1888) и Миланской (1891-1894) консерватории на основе документов, в особенности, «Моя автобиография» («Իմ ինքնակենսագրությունս»), которые хранятся в музее литературы и искусства имени Егише Чаренца.

Так же впервые упоминается о важной роли Беглара Амирджаняна на создание первого в Милане библиотеке-читальне.

Ключевые слова – Беглар Амирджанян, Петербургская консерватория, Камилио Эверарди, Миланская консерватория, Первая библиотека-читальня в Милане.

Years of study of Beglar Amirjan in conservatories of Petersburg and Milan

Gor Salnazaryan



The purpose of the article is to present the Armenian singer, baritone Beglar Amirjans (1896-1935) years of study in conservatories of Petersburg (1886-1888) and Milan (1891-1894) based on the documents and especially on «My autobiography» («Իմ ինքնակենսագրություն»), which are held in Museum of Literature and Art after Yeghishe Charents.

For the first time, special reference was made to the important role of B. Amirjan in creation of the first Russian library-reading-room in Milan.

Keywords: Beglar Amirjan, St. Petersburg Conservatory, Camille Everardi, Milan Conservatory, the first Russian library-reading-room in Milan.